

336.2

2-94

[1932]

336.2
2-94

1932 ՅԱՆ 20
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ԲԱՐՈՒՆԴԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

336.2
2-94

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԶԱՆԵՍԱՎՈՐՈՒՄ
1932 թ. մայիսի 26-ին
Ցերեալ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

1932 թ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ, ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒ-
ԹՅԱՆ, ԶՐԱՅԻՆ ՏՈՒՐՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ-
ՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ, ՄԱՍՆԱՎՈՐ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԲԱՐՁՐ ԳՆԵՐՈՎ ՎԱ-
ՃԱՌՔԻՑ ՍՏԱՅԱԾ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՅԵՎ ՎՈՉ-ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

1. Ընդհանուր կանոններ

§ 1. Վորպեսզի հնարավորություն լինի անհրաժեշտ տեղեկություն-
ներ ունենալ ցանքերի տարածությունների, բնակչության, անասուն-
ների քանակի մասին ինչպես և այլ տնտեսական տվյալներ, վորոնք հար-
կավոր են գյուղատնտեսական հարկի, պետական ապահովագրության
վճարումների և ջրային տուրքի համար—ամենուրեք կատարվում է հաշ-
տեսությունների հաշվառում:

Հաշվառման յենթակա յեն՝

ա) կուլիկտիվ տնտեսությունները (կոմունաներ, արտելներ, միատեղ
հող մշակող ընկերություններ).

բ) անհատական տնտեսություն ունեցողները.

գ) անհատական տնտեսություններ ունեցող կուլտնտեսության ան-
դամները.

դ) անհատական տնտեսություններ չունեցող կուլտնտեսության ան-
դամները.

յե) վարելահող չունեցող այլ անձինք, վորոնք գյուղատնտեսու-
թյամբ չեն դրադվում:

Ծանոթություն.— Կուլիկտիվ տնտեսությունները ցուցակա-
հրվում են առանձին կարգով: Գյուղխորհուրդներն այդ տնտեսու-
թյունների հաշվառում չեն կատարում:

§ 2. Հաշվառման կատարման համար ղեկավարությունը հրվում
է շրջանային գործադիր կոմիտեների կողմից, վորոնք պարտավոր են՝

ՀՍՀ - ՀՍՀ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ
ԲԱՐՈՒՆԴԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

24082 60

ՀՀ վաճառման նախապատրաստական բոլոր աշխատանքները, արելով գյուղացիությանը ճիշտ հաշվառման խոչընդոտները և նշանակությունը:

Հաճանգել գյուղխորհուրդներին գյուղացուցակների անձինքներ լրացնելու կարգի մասին:

Գ) կազմել հաշվառման որացուցցային ծրագիր յուրաքանչյուր գյուղի համար այն հաշվով, վոր տվյալ գյուղում դարձնանցանի կամ պանիան վերջանալուց անմիջապես հետո սկսվեն հաշվառման աշխատանքները: Հաշվառման կամ պանիան հաջող տանելու համար չըջգործկոմները յենթարկում են մոբիլիզացիայի չըջանային ապարատի աշխատակիցներին և ամբողջում են նրանց գյուղերին ագիտ-բացատրական և հրահանգչական աշխատանքներ տանելու համար:

§ 3. Ընդհանուր հաշվառում կատարելու պարտականությունները և հաշվառման ճշտությունը պատասխանատվությունը դրվում է գյուղխորհուրդի վրա:

§ 4. Հաշվառումը պետք է ամենուրեք վերջանա վոչ ուշ՝ քան հունիսի 25-ը:

§ 5. Հողի տարածությունը գյուղացուցակներում պետք է ցույց տալ տասնորդական կոտորակներով մինչև 0,01 հեկտար ճշտությամբ:

§ 6. Հաշվառման աշխատանքները պետք է կատարվեն գյուղխորհուրդներին կից կազմակերպված գյուղհարկային հանձնաժողովները հետևյալ կազմով՝

1. Նախագահ—գյուղխորհուրդի նախագահ
2. Անդամներ—գյուղի փոխադարձ ոգնություն կոմիտեի նախագահ, գյուղական համայնքի կողմից ընտրված ներկայացուցիչը, կոլտնտեսություն վարչության նախագահը և չբաժնորական խմբակի ներկայացուցիչը:

§ 7. Գյուղական ցուցակներում գրվում են անխտիր բոլոր տնտեսությունները, վորոնք գտնվում են գյուղում, անկախ նրանից՝ յենթակա յեն նրանք գյուղհարկի, թե վոչ, հետևյալ հերթականությամբ.

- ա) անհատական տնտեսություններ (մենատնտեսներ).
- բ) անհատական տնտեսություններ ունեցող կոլտնտեսության անդամներ.
- գ) անհատական տնտեսություն չունեցող կոլտնտեսության անդամներ.

դ) վարելահող չունեցող տնտեսություններ, վորոնք գյուղատնտեսությամբ չեն պարապում (ուսուցիչներ, բժիշկներ, բանվորներ, արհեստավորներ և այլն):

§ 8. Գյուղացուցակները կազմվում են մեկ սրինակից:

§ 9. Անտնապահական տնտեսությունները հաշվի յեն առնվում այն գյուղում, վորտեղ նրանք մշտապես բնակվում են: Այն դեպքում, յենք հնարավոր չէ վորոշել նրանց մշտական բնակավայրը, նրանք հաշվի յեն առնվում այնտեղ, վորտեղ գտնվում են հաշվառման պահին:

§ 10. Նախքան հաշվառում սկսելը, գյուղխորհուրդները հրավիրում են գյուղի հասարակության ընդհանուր ժողով, վորտեղ պարտավոր են՝

1) ծանոթացնել գյուղացիներին գյուղհարկի և պետապահովագրություն հիմնական սկզբունքներին, նրա կիրառման, առանձին տնտեսությունների և յեկամտի աղբյուրների հաշվառման կարգի ու գյուղհարկի բոլոր արտոնություններին հետ:

2) բացատրել, վոր հաշվի առնված տվյալների հիման վրա պետք է հաշվի վոչ միայն գյուղհարկը, այլ և պետական ապահովագրական վճարումները և ջրային տուրքը:

3) ղդուչացնել, վոր դիտավորյալ կերպով ցանքը կըծատած տնտեսություններին հարկը հաշվելու յե անցյալ տարվա ցանքի տարածություն համեմատ:

4) յայն բացատրել այն պատասխանատվության մասին, վորին յենթակա յե գյուղացին սխալ ցուցմունքներ տալու կամ յեկամտի աղբյուրները թագցնելու համար (քրեական պատասխանատվություն կամ՝ տուգանում վարչական կարգով):

Տուգանքի դումարը կարող է լինել թագցրած յեկամտի աղբյուրի վրա ընկնող հարկի հնդապատիկ դումարից վոչ ավելի: Միաժամանակ հարկավոր է ղդուչացնել, վոր յեկամտի աղբյուրներն թագցնելու դեպքում՝ ապահովագրման վճարումներին վարձատրությունը չի տրվում:

§ 11. Հաշվառումը կատարում է գյուղհարկային հանձնաժողովը անատիրոջ ցուցմունքների հիման վրա: Տնտեսերը հրավիրվում են խմբակներով և նրանցից յուրաքանչյուրի հարցաքննությունը կատարվում է մյուսների ներկայությամբ:

Գյուղխորհուրդները ղդուչացնում են գյուղացիներին, վոր նրանք պարտավոր են ներկայանալ գյուղհարկային հանձնաժողովին հաշվառման համար նշանակված ժամանակին և ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) կարմիր բանակայիններին տրվող արտոնություններից ոգտվելու իրավունք ունեցող տնտեսությունները—համապատասխան վկայականներ, վորոնք հաստատում են այդ իրավունքը:

բ) վոչ-գյուղատնտեսական ղրաղմունքներից ստացած յեկամտի դումարները հաստատող փաստաթղթեր, յեթե աղպիսիք մինչև հաշվառումը գյուղխորհուրդին չեն ներկայացված:

§ 12. Հաշվառման համար տեղեկություններ տալիս է տնտեսության

գլխավորը, իսկ նրա ժամանակավոր բացակայության դեպքում տնտեսության չափահաս անդամները: Միայն անչափահաս անդամների ցուցմունքների հիման վրա գյուղացուցակի լրացնելն արգելվում է:

§ 13. Այն դեպքերում, յերբ ձեռակերպված վկայականների համաձայն ընտանիքի անդամները համարվում են բաժանված և փաստորեն բաժան տնտեսություն են վարում, այդպիսի տնտեսությունները պետք է ցուցակագրվեն առանձին—վորպես բաժան:

Հակառակ դեպքում, այսինքն՝ յեթե տնտեսությունը ներկայացնում է համապատասխանորեն ձեռակերպված վկայական բաժանման մասին, բայց փաստորեն անբաժան տնտեսություն է կազմում—պետք է ցուցակագրել վորպես մեկ տնտեսություն:

§ 14. Տնատիրոջ հարցաքննության ժամանակ գյուղհարկային հանձնաժողովը պետք է ունենա իրեն ձեռքի տակ՝

ա) Հողժողովմատի տեղական մարմինների, առաջադրման համաձայն փաստորեն ցանկացած տարածություն և այդ ցանքերն ունեցող տնտեսությունների ցուցակը, վորը հաստատված է գյուղխորհրդի կողմից:

բ) անցյալ տարվա գյուղացուցակները, վորտեղից տեղափոխվում է 1932 թ. գյուղացուցակի մեջ 1931 թ. հաշվարկված 3 տարեկանից վեր կովերի և ցուլերի քանակը, ձմեռն անցկացրած վոչխարների և այծերի քանակը ինչպես և կանեփի, կտավահատի և ցանքերի ընդհանուր տարածությունները:

§ 15. Այն դեպքում, յերբ տնտեսության յեկամտի աղբյուրները պակասում են անցյալ տարվանից, հարցաքննողը պետք է հայտնաբերի և պարզի դրա բոլոր պատճառները: Հաշվառում կատարողը, հարևան գյուղացիների միջոցներով պետք է ստուգի տեղեկություն տվողի ցուցմունքները, տնտեսության ցանքի տարածությունը, վարելահողի, անասունների քանակի մասին և այլն: Յեթե հաշվառում կատարողները տրնտեսության տիրոջ պատասխանները կասկածելի և բացատրություններն անբավարար գտնեն, պետք է կատարեն յեկամտի աղբյուրների փաստացի ստուգում և թաղցրած յեկամտի աղբյուրները հայտնաբերելու դեպքում, կազմեն համապատասխան արձանագրություն տուգանքի կամ դատական պատասխանատվության յենթարկելու համար:

§ 16. Կապալով և կիսրար սլոյմանով մշակվող հողերը պետք է գրել ամբողջությամբ հող վերցնողի վրա և ավելացնել նրա ցանքերին:

§ 17. Հարցաքննությունը վերջանալուց և գյուղացուցակի համապատասխան սյունյակները լրացնելուց հետո, անմիջապես պետք է գումարել լրացրած սյունյակների տվյալները, յերկու գումարով, այն է՝ կոլտնտեսության մեջ մտնող տնտեսությունների տվյալներն առանձին տողով և մյուս տնտեսությունների տվյալներն առանձին տողով:

§ 18. Գյուղացուցակների վերջում այս տարի հաշվի առնված գումարների ցածի տողում պետք է գրել անցյալ տարվա գյուղի բոլոր տվյալները և հաշվել տարբերությունը: Տարբերությունների պատճառների մասին պետք է կազմել կարճ բացատրական արձանագրություն և կցել գյուղացուցակին:

§ 19. Հաշվառման արդյունքները տնտեսություն առ տնտեսություն անհրաժեշտ է յենթարկել քննության գյուղի ընդհանուր ժողովում, վորից հետո միայն հաշվառումը համարվում է ավարտված:

§ 20. Հաշվառման աշխատանքները վերջանալուց հետո գյուղհարկային հանձնաժողովի անդամները պետք է ստորագրեն գյուղացուցակների վերջում:

Ստուգումներից և անհրաժեշտ դեպքերում ուղղումներ մտցնելուց հետո, գյուղխորհուրդը պետք է հաստատի գյուղացուցակն իր ստորագրությամբ և կնիքով:

2. ԳՅՈՒՂՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 21. Գյուղացուցակի սյունյակների №№-ը սկսվում են 3-ից և վերջանում 140-րդ սյունյակով: 3-րդ սյունյակում պետք է գրվի տնտեսության №-ն ըստ կարգի: Յուրաքանչյուր գյուղում տնտեսությունների համարակալումը պետք է սկսել առաջին №-ից և վերջին №-ը պետք է հավասար լինի գյուղի տնտեսությունների ընդհանուր քանակին (նույն թվում և այնպիսի տնտեսությունների, վորոնք գյուղհարկի յենթակա յեկամտի աղբյուրներ չունեն): Նույն 3-րդ սյունյակում հայտարարով պետք է գրել նույն տնտեսության անցյալ տարվա №-ն ըստ գյուղացուցակի:

§ 22. Գյուղական ցուցակում գրվում են տնտեսությունները հետևյալ հերթականությամբ՝ ա) բոլոր մեղատնտեսները, բ) բոլոր կոլտնտեսության անդամները և գ) բոլոր այն տնտեսությունները, վորոնք գյուղատնտեսությամբ չեն պարապում (ուսուցիչներ, բժիշկներ, բանվորներ, արհեստավորներ և այլն): Կոլտնտեսության անդամներին ցուցակագրելիս անհրաժեշտ է ցույց տալ այն կոլտնտեսության անունը, վորին անդամ է կոլտնտեսականը:

§ 23. 4-րդ սյունյակում պետք է գրել տնտեսության տիրոջ ազգանունը, անունը և հայրանունը:

§ 24. 5—7-րդ սյունյակներում պետք է գրել նույն սյունյակների վերջագրերի համաձայն տնտեսության բոլոր շնչերի թիվը:

ա) տնտեսության շնչերի թվի մեջ պետք է մտնեն ընտանիքի բոլոր անդամները, վորոնք ունեն հողաբաժին: Հող չստացողներից շնչերի թվի մեջ պետք է հաշվել նոր ծնվածներին և նրանց, վորոնք մտել են տնտե-

սության մեջ հողաբաժանութիւնից հետո, յեթե նրանք չարունակ ազ-
րում են տնտեսութեան մեջ:

բ) այն վայրերում, վորտեղ հողաբաժանութիւնը դեռ չի կատար-
ված և գյուղացիները հողաբաժին չունեն կամ հողաբաժինն ստացված
և առանց հաշիւի առնելու տնտեսութեան շնչերի թիվը, տնտեսութեան
նից դուրս ապրող ընտանիքի անդամներին պետք է հաշվել շնչերի թիվում
միայն այն դեպքում, յերբ նրանք չեն կտրել իրենց կապը տնտեսութեան
հետ և իրենց վաստակները վորոշ մասը հատկացնում են տնտեսութեանը
կամ իրենք ռժանդակութեան են ստանում տնտեսութեանից:

գ) յեթե տնտեսութեանից դուրս ապրող ընտանիքի անդամն ունի
իր ընտանիքը, ապա տնտեսութեան շնչերի թիվի մեջ պետք է հաշվել այդ
ընտանիքի միայն այն անդամներին, վորոնք ունեն հողաբաժին:

դ) տնտեսութեան շնչերի թիվի մեջ չպետք է մտնեն վարձու բանվոր-
ները և նույնպես մեկ տարուց ավելի աղատալրկման դատաւարտված-
ները:

Գյուղացուցակի 5—7-րդ սյունյակները պետք է լրացվեն հետևյալ
կարգով՝

5-րդ սյունյակում պետք է գրել բոլոր շնչերը (մշտապէս ապրող և
բացակայող ընտանիքների անդամներին):

6-րդ սյունյակում պետք է գրել 5-րդ սյունյակում մատնանշված
այն անդամներին, վորոնք բացակայում են 3 ամսից ավելի (կարմիր բա-
նակայիններին, ուսանողներին, աշակերտներին և այլն):

7-րդ սյունյակում պետք է գրել տնտեսութեանում մշտապէս ապ-
րող ընտանիքի շնչերից միմիայն անաշխատունակ անդամներին:

Անաշխատունակ են համարվում՝ 1) բացարձակ հաշմանդամները,
2) մինչև 16 տարեկան հասակ ունեցողները, 3) 60 տարեկանից վեր տղա-
մարդիկ և 55 տարեկանից վեր կանայք:

25. 8-րդ սյունյակում պետք է գրել տնտեսութեան մեջ յեղած ամ-
բողջ վարելահողի տարածութիւնը, այն է՝ դաշտային և ագարակային
ամբողջ վարելահողի տարածութիւնները, հարոսները, խոտանացած,
հանգստի թողած և այլ հողամասերը:

Վարելահողի մեջ չպետք է հաշվել հնձվող հողերը (խոտհարքները),
խաղողի և պտղատու այգիներն ու թթենու տնակարանները, ինչպես նաև
այն հողամասերը, վորոնք բռնված են շենքերով:

§ 25. Դաշտային և ագարակային ցանքի բաժնի սյունյակները պետք
է լրացնել նույն սյունյակների վերնագրերի համաձայն: Այն դեպքում,
յերբ տնտեսութեանն ունի խառն ցանք, ամբողջ ցանքի տարածութիւնը
գրվում է գերազանցող մշակույթի սյունյակում: Որինակ՝ տնտեսու-
թեանն ունի 1,2 հեկտար սոյայի և յեզիպտացորենի խառն ցանք, վորից

սոյայի մշակույթը գերազանցում է: Այս դեպքում ամբողջ 1,2 հեկտար
ցանքի տարածութիւնը գրվում է գյուղացուցակի 11-րդ (սոյայի) սյուն-
յակում:

9—16-րդ սյունյակները լրացվում են ըստ այդ սյունյակների վերնա-
գրերում մատնանշված մշակույթների տեսակների, այն է՝ 9-րդ սյուն-
յակում պետք է գրել ծխախոտի տարածութիւնը (դեղին և դուլյասա-
յի), 10-րդում բամբակի, 11-րդում սոյայի, 12-րդում կենաֆի, 13-րդում
չինապերճախի, 14-րդում արախիսի, 15-րդում սուդգաի և 16-րդում
բունջութի:

§ 26. 17-րդ սյունյակը հաշվառման ժամանակ չի լրացվում և չի
գծվում:

§ 27. 18-րդ սյունյակում պետք է գրել ամբողջ հացահատիկային
ցանքի տարածութիւնը, ինչպես աշնանացանի, նույնպես և դարնանա-
ցանի տարածութիւնը (գարի, ցորեն, յեզիպտացորեն, կորեկ, վարսակ
և այլն):

Հացահատիկային այն մշակույթները, վորոնք ցանվում են սի-
րոսային կամ թարմ կերի համար, այդ սյունյակում չեն գրվում:

§ 28. 19-րդ սյունյակում պետք է գրել, բոլոր ցանված ընդեղեն
մշակույթների տարածութիւնը (լորի, սխեռ, վոսպ, սորգո և այլն):

§ 29. 20-րդ սյունյակում գրվում է արեածաղկի տարածութիւնը:
Այն դեպքերում, յերբ արեածաղկի մշակույթը ծառայում է իբրև սիլո-
սային կեր, այդ տարածութիւնը չի գրվում 20-րդ սյունյակում, այլ
գրվում է 22-րդում:

§ 30. 21-րդ սյունյակում պետք է գրել բոլոր ցանովի խոտերի տա-
րածութիւնը (յոնջա, կորրնդան և այլն): Հացահատիկային կամ ընդե-
ղենի մշակույթների ցանքերը, յեթե այդ մշակույթների բերքը հնձվում
է և իբրև կանաչ կեր կամ խոտ, պետք է հաշվի առնեն վորպես ցանովի
խոտեր:

§ 31. 22-րդ սյունյակում պետք է գրել սիլոսային մշակույթ-
ների ցանքը, վորի բերքը հատկացվում է սիլոսային կերի համար: Այն
սիլոսային մշակույթները, վորոնց բերքը չի հնձվում, այլ վարվում
է հողը պարարտացնելու համար, այդ սյունյակում չի գրվում:

§ 32. 23-րդ սյունյակում պետք է գրել 18—22-րդ սյունյակներում
գրված ցանքի տարածութեան մեջ հաշված միայն ջրովի մշակույթների
տարածութիւնը:

§ 33. 24—31-րդ սյունյակներում պետք է կտախտ և կենա-
փի մշակույթների տարածութիւնը, այսինքն 24-րդ սյունյակում պետք
է գրել նոր մշակված հողի վրա յեղած կտախտի ցանքի տարած-

ծությունը, իսկ 25-րդ սյունյակում նույն մշակութի մնացած հոդամասերում յեղած ցանքի տարածությունը: 26-րդ սյունյակում պետք է գրել 1931 թ. կտավատի ցանաքի տարածությունը, վորը մեքենայորեն արտադրվում է անցյալ տարվա գյուղացուցակի 14-րդ սյունյակից: Յեթե 25-րդ սյունյակի տարածությունը լինի ավելի 26-րդ սյունյակում մատնանշված տարածությունից, ապա տարբերությունը պետք է գրել 27-րդ սյունյակում, վորպես ավելցուկ:

28-րդ սյունյակում պետք է գրել միայն դաշտում և նոր մշակված հողի վրա ցանված կանեփի տարածությունը, իսկ 29-րդ սյունյակում այլ հողամասերում յեղած կանեփի մնացած ցանքերը: 30-րդ սյունյակում պետք է գրել 1931 թ. կանեփի ցանքի տարածությունը (անցյալ տարվա գյուղացուցակի 13-րդ սյունյակը), բայց վոչ թե ամբողջովին, այլ դուրս գալով այն մասը, վորը ցանված է յեղել դաշտում: Յեթե 29-րդ սյունյակի տարածությունը լինի ավելի 30-րդ սյունյակի տարածությունից, տարբերությունը պետք է գրել 31-րդ սյունյակում, վորպես ավելցուկ:

§ 33. Յեթե տնտեսությունը 1932 թ. խամ հոգերի վրա կունենա ցանք, այդպիսին պետք է գրել 32-րդ աղատ սյունյակում:

1932 թ. ամբողջ ցանքը անսպասման պետք է համեմատել 1931 թ. ամբողջ ցանքի հետ: Յեթե լինի ցանքի տարածության ավելցուկ ի հաշիվ խամ հոգերի վրա կատարված ցանքի, այդ ավելցուկը պետք է գրել 32-րդ աղատ սյունյակում հայտարարով՝ որինակ՝ տնտեսությունը 1931 թ. ունեցել է 4 հեկտար ցանք, իսկ այս տարվա ամբողջ ցանքի տարածությունը հավասար է 6 հեկտարի, վորից խամ հոգերի վրա կատարված ցանքը կազմում է 1 հեկտար, ուրեմն 32-րդ սյունյակում հայտարարով պետք է գրել 1 հեկտար ցանք, վորը աղատվում է հարկից:

§ 34. 33—39-րդ սյունյակներում պետք է գրել այդ սյունյակներին վերնագրերում մատնանշված մշակույթների տարածությունները, այն է՝ 33-րդ սյունյակում չալթուկի տարածությունը, 34-րդ բանջարանոցների, 35-րդում բախչանների, 36-րդում կարտոֆիլի ամբողջ տարածությունը, իսկ 37-րդ նույն թվում միայն ջրովի կարտոֆիլի տարածությունը, 38-րդում կերի արմատապտուղների և 39-րդում այլ մշակույթների (քեղդերի, ռամիի, կաուչուկաբեր, զաֆրան, չաքարի ձակնդեղ և այլն):

§ 35. 40-րդ աղատ սյունյակում պետք է գրել 1931 թ. ամբողջ ցանքի տարածությունը (անցյալ տարվա գյուղացուցակի 33-րդ սյունյակ):

§ 36. 41-րդ սյունյակում պետք է գրել տնտեսության հաշվառված 1932 թ. ամբողջ ցանքի տարածությունը: Այսինքն 9—16, 18—22, 24—25, 28—29, 33—36, 38 և 39 սյունյակներին դումարները:

§ 37. 42-րդ սյունյակում պետք է գրել մինչև 1932 թ. հաշվառումը աղետից փչացած աշնան ցանքի ամբողջ տարածությունը, ըստ վորում փչացած ցանք պետք է հաշվել այնպիսին, վորը պետք է հնձվի իբրև կեր անասունների համար, կամ այդ ցանքի տարածությունը նորից վարվի, կամ ևլ այդ փչացած ցանքն ամբողջովին պետք է թողնվի առանց ոգտագործման:

Յեթե փչացած տարածությունից հնարավոր լինի հավաքել վորևէ չափով բերք՝ թեկուզ ավելի քիչ, քան ցանված սերմը, ապա այդպիսի տարածությունը փչացած չպետք է համարել:

Փաստորեն փչացած ցանքի տարածությունը չպետք է մոցնել 1932 թ. ցանքի տարածության մեջ (41-րդ սյունյակ):

Յեթե տնտեսությունը փչացած տարածությունը կրկին ցանել և դարնանը, այդ կրկին ցանած տարածությունը ցույց է տրվում համապատասխան սյունյակներում դարնանացան մշակույթների հետ:

§ 38. 43-րդ սյունյակում պետք է գրել ամբողջ հարկվող ցանքը: Դրա համար հարկավորե 1932 թ. ամբողջ հաշվառված ցանքից (41-րդ սյունյակ) հանել կտավատի ցանքը նոր մշակված հողերի վրա (24-րդ սյունյակ), նույն մշակույթի ավելցուկը (27-րդ սյունյակ) կանեփի ցանքը դաշտում և նոր հոգերի վրա (28-րդ սյունյակ), նույն մշակույթի ավելցուկը (31-րդ սյունյակ) և այլ մշակույթների տարածությունը (39-րդ սյունյակ): Այդպիսով ստացված մնացորդը պետք է գրել 43-րդ սյունյակում:

§ 39. Յեթե տնտեսությունը, առանց հարգելի պատճառների այս տարի համեմատած անցյալ (1931 թ) տարվա ցանքի հետ անհարգելի պատճառներով (դիտավորյալ) պակասեցրել է իր ցանքի տարածությունը, ապա գյուղհարկահանձնաժողովը պետք է նշանակի «անհարգ» (անհարգելի) իսկ հարգելի պատճառներում «հարգ» (հարգելի):

Անհարգելի պատճառներով ցանքի տարածությունը պակասեցնող տնտեսությունը, հարկվում է 1931 թ. ցանքի տարածության համեմատ: Այդ նպատակով գյուղացուցակի հարկվող ցանքի սյունյակում (43-րդ սյունյակում) պետք է գրել տնտեսության 1931 թ. ամբողջ ցանքի տարածությունը (40-րդ սյունյակ), վորովհետև ցանքը կրճատող տնտեսության վրա չի տարածվում այս տարվա որևէ դում նախատեսված արտոնությունները (կտավատի, կանեփի, չաքարի ձակնդեղի և այլ մշակույթների ցանքերը չեն աղատվում):

§ 40. 44-րդ սյունյակում գրվում է կտավատի և կանեփի հարկվող տարածությունները, այն է՝ 25 և 29-րդ սյունյակներին տվյալները, յեթե այդ մշակույթները չունեն ավելցուկ, իսկ այն դեպքում՝ յեթե կա ավելցուկ, պետք է վերցնել 1931 թվի 26 թվի և 30 սյունյակներին տվյալները:

§ 41. 45—48-րդ սյունյակները պետք է լրացնել հետևյալ ձևով՝
ա) 45-րդ սյունյակում պետք է գրել ծխախոտի տարածությունը
(9-րդ սյունյակ) :

բ) 46-րդում պետք է գրել կարտոֆիլի տարածությունը համարելով
և չափուկի տարածությունը հայտարարով (36-րդ և 33-րդ սյունյակ-
ներին) :

գ) 47-րդ սյունյակում պետք է գրել բանջարանոցների և բախչանների
տարածությունները մեկ գումարով (34—35 սյունյակին) :

դ) 48-րդ սյունյակը պետք է հատկացնել բամբակի տարածություն-
ներին և ցույց տալ 10-րդ սյունյակի տվյալները :

§ 42. 49-րդ սյունյակում պետք է գրել դաշտամշակութային նորմա-
ներով հարկվող ցանքի տարածությունը, վորի համար անհրաժեշտ է
ամբողջ հարկվող ցանքի տարածությունին (43-րդ սյունյակ) դուրս դա-
րաշտամշակութային նորմաների կեսի չափով հարկվող տարածությու-
նը (44-րդ սյունյակ) և հատուկ նորմաներով հարկվող ցանքերի տարա-
ծությունները (45, 46, 47 և 48-րդ սյունյակ) և մնացորդը գրել 49-րդ
սյունյակում :

§ 43. 50 և 51-րդ սյունյակներում պետք է գրել պտղատու այգիներ-
ը, հետևյալ կարգով՝

50-րդ սյունյակում պետք է գրել պտղատու այգիները և 51-րդ
սյունյակում պտղատու այգիների միայն ջրովի տարածությունը :

§ 44. 52 և 53-րդ սյունյակներում պետք է գրել խաղողի այգիները
նույն կարգով, վորը սահմանված է պտղաբեր այգիների համար :

§ 45. Թթենու անկարանները 54-րդ սյունյակում գրվում են միայն
այն դեպքում, յեթե նրանք չեն ծառայում չերամապահության նպա-
տակների համար :

§ 46. 55 և 56-րդ սյունյակները չեն լրացվում :

§ 47. 57-րդ սյունյակը հաշվառման ժամանակ չի լրացվում և չի
գծվում :

§ 48. 58 և 59-րդ սյունյակներում պետք է գրել տնտեսութային մեջ
մշտապես, վորպես խոտհարք ոգտագործվող տարածությունը, այն և՛
58-րդում պետք է գրել այդ խոտհարքի ամբողջ տարածությունը, իսկ
59-րդում այդ տարածությունին միայն ջրովի մասը :

§ 49. 60 և 61-րդ սյունյակներում պետք է գրել տնտեսութային պատ-
կանող բոլոր փեթակների քանակն այդ սյունյակների վերնագրերի հա-
մապատասխան :

§ 50. 62, 63 և 64-րդ սյունյակները հաշվառման ժամանակ չեն լրաց-
վում և չեն գծվում :

§ 51. Բոլոր տեսակի անասունների հաշվառումը տարվում է բնո-

հանուր կարգով : Այս տարվա Պետպլանի կողմից կատարած անասուն-
ների հաշվառման տվյալները պետք է ոգտագործվեն իբրև ոժանդակ
նյութ :

§ 52. 65—69-րդ սյունյակներում պետք է գրել ձիերի և ջորիների
քանակն ըստ այդ սյունյակների վերնագրերի :

§ 53. 70—78-րդ սյունյակներում պետք է գրել խոշոր յեղջուրավոր
անասունների քանակն այդ սյունյակների վերնագրերի համաձայն :

§ 54. 79-րդ սյունյակում պետք է գրել անցյալ տարվա գյուղցուցա-
ցակից ցուլերի, յերինջների և կովերի քանակը, (տեղափոխել 1931 թ.
գյուղցուցակի 63-րդ սյունյակի տվյալները) : Ապա այս տարվա քանա-
կին (77—78 սյունյակ) պետք է դուրս գալ 79-րդ սյունյակի տվյալ-
ները և մնացորդը գրել 81-րդ սյունյակում ինչպես «աղատվող ավել-
ցուկ» :

Այդ դեպքում 80-րդ սյունյակում (հարկվող) պետք է գրել 79-րդ
սյունյակի տվյալները (1931 թ. հաշվառած քանակը) : Յեթե պարզվի,
վոր հարկվող անասունների թիվը համեմատելով անցյալ տարվա հետ
չի ավելացել, այլ մնացել է անփոփոխ կամ պակասել է, ապա ցուլերի,
յերինջների և կովերի թիվը (77 և 78 սյունյակ) գրվում է 80-րդ սյուն-
յակում, իսկ 81-րդ սյունյակը գծվում է :

§ 55. 82—90-րդ սյունյակներում պետք է գրել գոմեշների և մա-
տակների քանակն ըստ այդ սյունյակների վերնագրերի :

§ 56. 91-րդ սյունյակում պետք է գրել անցյալ տարվա գյուղցուցա-
կից գոմեշ-ցուլերի և մատակների քանակը, այսինքն՝ տեղափոխել 31 թ.
գյուղցուցակից 73-րդ սյունյակի տվյալները : Ապա այս տարվա քանա-
կին (89 և 90-րդ սյունյակ) պետք է հանել 1931 թ. քանակը (91-րդ
սյունյակ) և մնացորդը գրել 93-րդ սյունյակում, վորպես «աղատվող
ավելցուկ» : Այդ դեպքում 92-րդ սյունյակում պետք է գրել 91-րդ սյուն-
յակի տվյալները (1931 թ. հաշվառած) : Յեթե պարզվի, վոր հարկվող
գոմեշների և մատակների քանակը համեմատելով անցյալ տարվա հետ
չի ավելացել, այլ մնացել է անփոփոխ կամ պակասել է, ապա ցուլ գո-
մեշների, յերինջ մատակների և մատակների հաշվառված ամբողջ թիվը
(89 և 90-րդ սյունյակ) գրվում է 92-րդ սյունյակում, իսկ 93-րդ սյուն-
յակը գծվում է :

§ 57. 94—96-րդ սյունյակներում պետք է գրել ուղտերն ըստ նրանց
հասակի, այդ սյունյակների վերնագրերի համեմատ :

§ 58. 97—99 սյունյակներում պետք է գրել եղերի քանակը :

§ 59. 100-րդ սյունյակում պետք է գրել 1931 թ. հաշվառած վոչ-
խարների և այծերի քանակը այսինքն՝ փոխադրել անցյալ տարվա գյուղ-
ցուցակի 94-րդ սյունյակի տվյալները :

§ 60. 101-րդ սյունյակում պետք է գրել զառնների և այծերի քանակը :

§ 61. 102 և 103 սյունյակներում պետք է գրել ձմեռն անցկացրած վոչխարները և այծերը հետեյալ կարգով՝

Այս տարվա ձմեռն անցկացրած վոչխարների և այծերի քանակից պետք է դուրս դալ անցյալ տարվա վոչխարների և այծերի քանակը (100-րդ սյունյակ) և մնացորդը պետք է գրել 103-րդ սյունյակում, վորպէս «ազատվող ավելցուկ» : Նման դեպքում 102-րդ սյունյակում (հարկվող) պետք է գրել 100-րդ սյունյակի քանակը (1931 թ. հաշվառած) : Իսկ յեթե պարզվի, վոր այս տարվա հարկվող վոչխարների և այծերի քանակը 1931 թ. հաշվառած քանակի համեմատությամբ չի ավելացել, այլ մնացել և անփոփոխ, կամ պակասել և, ապա այս տարվա բոլոր ձմեռն անցկացրած վոչխարները և այծերը պետք է գրել 102-րդ սյունյակում, իսկ 103-րդ սյունյակը դնել :

§ 62. 104-րդ սյունյակում պետք է գրել այս տարվա հաշվառած բոլոր եղ (մայր) վոչխարների և այծերի քանակը :

§ 63. 105, 106, 107 և 108-րդ սյունյակներում պետք է գրել տնտեսութեան խոզերի քանակը հետեյալ կարգով՝

105-րդ սյունյակում պետք է գրել փոքրահասակ խոզերը 4-ից մինչև 9 ամսական հասակում :

106-րդ սյունյակում պետք է գրել եղ (մայր) խոզերը 8 ամսականից բարձր հասակում :

107-րդ սյունյակում համարիչով պետք է գրել 9 ամսականից բարձր բոլոր խոզերի ընդհանուր քանակը, իսկ հայտարարով նույն թվից միայն արտադրող վարպետների քանակը :

108-րդ սյունյակում պետք է գրել փոքրահասակ խոզերի քանակը մինչև 4 ամսական հասակում :

§ 64. 109—140-րդ սյունյակները հաշվառման ժամանակ չեն լրացվում և չեն դնվում :

3. ՄԱՍՆԱՎՈՐ ՇՈՒԿԱՅՈՒՄ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔԵՆԵՐ ՎԱՃԱՌԵՎՈՒՑ ՍՏԱՅԱԾ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 65. Մենատնտեսների կողմից մասնավոր չուկայում գյուղատնտեսական մթերքների վաճառքից ստացած յեկամուտները հաշվի չեն առնվում այն դեպքերում, յեթե մթերքները վաճառվել են ավելի բարձր գներով, քան պետական և կոոպերատիվ կազմակերպութեանների գները :

Այդ յեկամուտները վորոշվում են 1931 թ. հաշվառման պահից սկսած մինչև 1932 թ. հաշվառում կատարելու որը՝ ստացված գումարի չափով :

§ 66. Կոլտնտեսականների տնտեսութեաններում այն յեկամուտներ-

բը, վորոնք ստացվել են գյուղմթերքներ մասնավոր չուկայում վաճառելուց հաշվառման յենթակա չեն :

§ 67. Այդ յեկամուտները վորոշելու ժամանակ պետք է հաշվի առնել վոչ թե վաճառված մթերքների ամբողջ արժեքը, այլ այն տարբերութեանը, վորը ստացվել է պլանային մթերման և մասնավոր չուկայի գների մեջ յեղած տարբերութեանների հետեանքով :

Հաշվի են առնվում նաև բոլոր տնտեսի անասունների բարձր գներով վաճառքից ստացած յեկամուտները (նույն թվում և յերիտասարդ անասուններ) :

Յեթե տնտեսութեանը բարձր գներով վաճառել է իր անասունը՝ փոխարինելու նպատակով, ապա այդ յեկամուտը հաշվառման յենթակա չէ :

Որինակ՝ տնտեսութեանը վաճառել է մեկ կով և նրա փոխարեն գնել է մեկ յեղ, կամ հակառակը, այդ դործարքը չպետք է հաշվել չուկայի վաճառք :

§ 68. Այն դեպքում, յերբ մենատնտեսը իր գյուղատնտեսական մթերքները վաճառում է կոլտնտեսութեան կրպակի կամ կոլտնտեսութեան չուկայի միջոցով, ապա այդ վաճառքից ստացած չուկայի յեկամուտները հաշվառման յենթակա չեն :

Որինակ՝ մենատնտեսը կոլտնտեսութեան կրպակի միջոցով գյուղատնտեսական մթերքները վաճառելուց ստացել է 120 ռ. յեկամուտ, միաժամանակ այդ մենատնտեսը մասնավոր չուկայում բարձր գներով մթերքներ վաճառելուց ստացել է 100 ռ. : Այդ դեպքում յեթակա յե հաշվառման միայն վերջին 100 ռ. յեկամուտը :

§ 69. Գյուղհարկային հանձնաժողովները հարցաքննում են ամեն մի տնտեսութեան ղլխավորն և պարզում մասնավոր չուկայում գյուղատնտեսական մթերքները բարձր գներով վաճառելուց ստացած յեկամուտների դումարները :

Այդ նպատակով հարկհանձնաժողովները հարցաքննում են նաև համագյուղացիներին :

Յեթե պարզվում է, վոր այս կամ այն տնտեսութեանը ստացել է այդպիսի յեկամուտներ ապա գյուղհարկային հանձնաժողովներն անմիջապէս պարզում են այդ յեկամուտների դումարը :

§ 70. Մասնավոր չուկայում գյուղատնտեսական մթերքները բարձր գներով վաճառելուց ստացած յեկամուտները մանրամասն հաշվելու և արձանագրելու նպատակով, գյուղհարկահանձնաժողովները կազմում և լրացնում են դրա համար սահմանված հատուկ ցուցակ :

Այդ ցուցակը պետք է լրացնել հետեյալ կարգով՝

ա) ցուցակի վերնագրում պետք է գրել գյուղի և շրջանի անունները :

բ) 2-րդ սյունյակում պետք է գրել տնտեսութեան № րոտ գյուղացուցակի.

գ) 3-րդ սյունյակում պետք է գրել տնտեսատիրոջ ազգանուն, առնուն և հայրանունը.

դ) 4-րդ սյունյակում պետք է գրել այն մթերքների անունները, վորոնք վաճառված են մասնավոր շուկայում բարձր գներով: Այդ սյունյակում պետք է գրել միայն գլխավոր մթերքների անունները, որինակ՝ հաց (ցորեն, գարի, ալյուր, խոտ և դարման, կաթնամթերքներ, մսեղեն, անասուններ, խաղող, բանջարեղեն և այլն):

յե) 5-րդ սյունյակում պետք է գրել բարձր գներով վաճառված գյուղատնտեսական մթերքների քանակը (մթերքների քանակը պետք է ցույց տալ կիլոներով, կամ այլ չափի միավորներով):

զ) 6-րդ սյունյակում պետք է ցույց տալ ամեն մի մթերքը վաճառելու ստացած յեկամորի գումարը: Որինակ՝ վաճառված է 7 փութ ցորեն, փութը 20 ա. և ստացվել է 140 ա.: Այդ սյունյակում պետք է գրել 140 ա. գումարը:

ը) 7-րդ սյունյակում պետք է գրել այն գումարը, վոր մնում է մասնավոր շուկայում վաճառելուց ստացած ամբողջ գումարից, պլանային մթերման գներով հաշված նույն մթերքի արժեքը դուրս գալուց հետո: Որինակ՝ 7 փութ ցորեն վաճառելուց ստացվել է 140 ա., իսկ պլանային մթերման գներով 7 փութ ցորենի արժեքը կազմում է ասենք թե 14 ա.: Ուրեմն դուրս գալով 14. կմնա 126 ա., այդ 126 ա. նշանակվում է 7-րդ սյունյակում:

թ) 8-րդ սյունյակում մասնավոր շուկայից ստացված յեկամուտները վորոշելու ժամանակ չի լրացվում և չի գծվում:

Այդ սյունյակում գրվում է այն գումարը, վորը հաստատված է շրջանային հարկային հանձնաժողովի կողմից:

ժ) 9-րդ սյունյակում պետք է գրել գանաղան լրացուցիչ տեղեկություններ տնտեսութեան վերաբերյալ:

§ 71. Մասնավոր շուկայում բարձր գներով գյուղատնտեսական մթերքներ վաճառելուց յեկամուտներ ստացած տնտեսութունների ցուցակը կազմելու և այդ յեկամուտների գումարները վորոշելու աշխատանքներին, գյուղհարկի հանձնաժողովներն անպայման պետք է մասնակից անեն գյուղի լայն հասարակութեանը և ամբողջ ակտիվին:

§ 72. Գյուղհարկային հանձնաժողովների կողմից վերահիշյալ կարգով կազմված ցուցակները ստորագրվում են և ներկայացվում են գյուղացուցակի հետ միասին շրջագործկոմիտեին:

5. ՎԱՁ-ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՅԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 73. Վոչ-գյուղատնտեսական յեկամուտները հաշվի յեն առնվում 1931 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամանակաշրջանում ստացված գումարների չափով:

§ 74. Վոչ-գյուղատնտեսական դրաղմունքներից ստացած յեկամուտները յենթակա յեն գյուղհարկի միայն գյուղատնտեսութեամբ պաշարող տնտեսութուններում:

§ 75. Գյուղատնտեսութեամբ պարապող տնտեսութուններում գյուղհարկի յենթակա յեն՝ վոչ-գյուղատնտեսական դրաղմունքներից ստացած յեկամուտները, այն է՝

ա) աշխատավարձը (վարձու աշխատանք կատարելու համար),

բ) դրսի դրաղմունքներից (արտագնացութեան) ստացած յեկամուտները.

դ) տնայնագործական և արհեստավորական դրաղմունքներից ստացած յեկամուտները.

դ) այլ վոչ-գյուղատնտեսական դրաղմունքների յեկամուտները.

յե) առևտրից ստացած յեկամուտները, յեթե առևտրականը դրաղվում է նաև գյուղատնտեսութեամբ:

§ 76. Գյուղհարկային հանձնաժողովները հաշվի յեն առնում անխրտի բոլոր վոչ-գյուղատնտեսական դրաղմունքներից ստացած յեկամուտները՝ անկախ նրանից յենթակա յեն այդ յեկամուտները հարկման թե վոչ:

Ծանոթութեան.— Շրջֆինրաժինները հաշվառած վոչ-գյուղատնտեսական յեկամուտներից հարկման են յենթարկում միայն այն յեկամուտները, վորոնք պետք է հարկվեն 1932 թ. գյուղհարկի որենքի համաձայն:

§ 77. Աշխատավարձ և դրսի վարձու դրաղմունքի յեկամուտ պետք է համարել, պետական, կոոպերատիվ հիմնարկութուններում կամ մասնավոր ձեռնարկութուններում և տնտեսութուններում վարձու աշխատանք կատարելու համար ստացվող ամեն տեսակի վարձատրութունը, անկախ աշխատանքի բնույթից, և վարձատրման ձևից:

Աշխատավարձի և դրսի վարձու դրաղմունքներից ստացված յեկամուտի մեջ պետք է մտնեն բոլոր տեսակի վաստակները, այն է՝ հիմնական ուժիկը, արտաժամյա աշխատանքի համար ստացած վարձատրութունը, հավելումները և այլն, վորոնք ստացվել են 1931 թ. հունվարի 1-ից մինչև 1931 թ. դեկտեմբերի 31-ը:

Աշխատավարձը հաշվելիս, վոչ մի ծախս (սենյակի վարձ, ճանապարհատրվածքներ և այլն) հանվում է:

պարհի ծախս, պրոֆիտի լուծյան անդամավճարները կամ ուրիշ ծախսերը) չպետք է դուրս գալ, այլ պետք է հաշվի առնել լրիվ դումարով:

Աշխատավարձի և դրսի վարձու գրադմունքներից ստացած յեկամությունների մեջ չպետք է մտնեն:

ա) սոցիալական ապահովագրման կարգով և գործադուրկներին տրվող ոժանդակ միջոցները:

բ) հիվանդությունից ժամանակ վարձուղի կողմից ցույց տված նյութական ոժանդակությունները:

գ) չորտագործված արձակուրդի համար տրված վարձատրությունները (կոմպենսացիան):

դ) գործուղման և տեղափոխման համար, աշխատանքի որևէ գրություններ համաձայն տրվող բոլոր տեսակի վճարումները:

յե) գործուղման ճանապարհածախսեր և

զ) տրվող լուծարքային հատույթները (լիկվիդացիոն):

Աշխատավարձի և դրսի վարձու գրադմունքների յեկամությունները պետք է վորոշել հարկատուների հաշվեկրթույթների և հիմնարկություններից, ձևնարկություններից տրված տեղեկանքների հիման վրա:

Գյուղխորհուրդները և չրջգործկոմները իրավունք ունեն հիմնարկություններից պահանջել տեղեկություններ բանվորների և ծառայողների աշխատավարձի վերաբերյալ: Յեթե մինչև հաշվառումը տնտեսություններ չի ներկայացնի համապատասխան տեղեկանք ստացված յեկամաբաի մասին, ապա այդ յեկամությունները վորոշում են գյուղհարկհանձնաժողովներն իրենց մոտ յեղած տվյալների հիման վրա:

§ 78. Յեթե տնտեսությունից անդամը ժամանակավորապես կտրվելով տնտեսությունից պարապում է արհեստով գյուղից դուրս վայրերում միայն վարձու պայմաններով, նրա ստացած աշխատավարձը հաշվվում է իրեն դրսի վարձու գրադմունքներից ստացած յեկամուտ:

Դրսի վարձու գրադմունք ունեցող անձանց յեկամությունները վորոշելու համար, չրջանային հարկահանձնաժողովները և գյուղհարկային հանձնաժողովները պահանջում են նրանցից նույնպիսի փաստաթղթեր, վորպիսիք պահանջում են մշտապես իրենց տնտեսություններում ապրողները: աշխատավարձը վորոշելու համար:

Յեթե փաստացի տվյալներ չկան, այն ժամանակ հարցումների միջոցով պետք է պարզել:

ա) վորտեղ և աշխատում տնտեսությունից անդամը:

բ) ինչով և դրադվում:

գ) վորքան ժամանակ է նա աշխատել դրսում:

դ) ընդհատումներով, թե անընդհատ է աշխատել (վորքան ժամանակով և ընդհատել աշխատանքը) և

յե) աշխատանքի պայմանները (աշխատավարձը և այլն):

Այս անհրաժեշտ տեղեկությունները պետք է նշանակել վորջուղաանտեսական յեկամությունները հաշվելու համար սահմանված ձևով արձանագրությունից համապատասխան սյունյակներում և նրանց հիման վրա վորոշել դրսի գրադմունք ունեցողի յեկամուտը:

§ 79. Դրսի վորջվարձու գրադմունքներ ունեցող պետք է համարել իրենց գյուղից դուրս աշխատող այն տնայնագործներին և արհեստավորներին, վորոնք դրադվում են սեփական կամ ուրիշի նյութերի վերամշակությամբ, վորպես արհեստավորներ, որինակ՝ պղնձագործներ, հյուսներ, կոշիկակարներ, դերձակներ և այլն, վորոնք սակայն ստանում են վոր թե աշխատավարձ, այլ հատուկ վարձատրություն կատարած աշխատանքի համար:

Այդ արհեստավորների յեկամությունները պետք է վորոշել նույն ձևով, ինչպես վորոշվում է տնայնագործական և արհեստավորական գրադմունքների յեկամուտը:

§ 80. Գյուղհարկի յեկամական տնայնագործական գրադմունքների յեկամություններ պետք է համարել բոլոր տեսակի արտադրական ձևնարկություններից ստացվող դումարները, անկախ նրանից, հատուկ սարքավորված չենքում և կիրառվում գրադմունքը, թե բնակելի տան մեջ:

Այդ կարգով և ձևով պետք է հաշվել նաև այլ վորջուղաանտեսական յեկամություններ, ինչպես որինակ՝

ա) վորխաղրական արհեստից:

բ) ձկնորսությունից:

գ) ազատ պրոֆեսիաներից (յերաժիշտ, նկարիչ և այլն):

դ) գյուղատնտեսական գործիքներ վարձով տալուց:

յե) շենքերի վարձից և այլն:

Տնայնագործական, արհեստավորական և այլ աշխատավորական գրադմունքների յեկամությունները հաշվի յեն տնվում ընդհանուր դումարով, վորից հանվում են բոլոր հիմնական արտադրական ծախսերը հումքի կիսաֆարրիկատների և վատելանյութերի արժեքը, բանվորների աշխատավարձը, ձևնարկությունից համար չենք, անասուններ, արտադրական կահավորանք վարձելու կամ ձևնարկությունից մեջ աշխատող անասունների կեր պնելու ծախքը և վճարած արհեստագործական հարկի գումարը:

Ընդհանուր յեկամուտից պետք է հանել թված արտադրական ծախսերը, արձանագրություն ցուցակը լրացնելու ժամանակ:

§ 81. Վորջաշխատավորական յեկամություններ են համարվում այն բոլոր յեկամությունները, վորոնք ստացվում են այնպիսի ձևնարկություններ:

քի չափազանցումից, կամ արհեստներով զբաղվելուց, վորոնք ՀՍԽՀ Ժողովուրդի 23 մայիսի վորոշման համաձայն հիմք են ծառայում անհատական կարգով հարկելու համար:

Վոչ-աշխատավորական յեկամուտները վորոշվում են նույն դով, վորը սահմանված է տնայնագործական զբաղմունքների համար, այն է՝ ընդհանուր յեկամտի գումարից հանվում են բոլոր հիմնական արտադրական ծախքերը: Առետրից ստացած յեկամուտը վորոշելու համար ծախքերի մեջ պետք է հաշվել նաև ապրանքների արժեքը:

§ 82. Կոլտնտեսականների վոչ-գյուղատնտեսական զբաղմունքներից ստացած յեկամուտները յենթակա յեն հաշվառման անկախ նրանից՝ ունեն նրանք չհանրայնացված գյուղատնտեսական յեկամուտներ թե վոր կոլտնտեսականների տյն յեկամուտները, վորոնք ստացվում են կոլտնտեսություններում աշխատելուց (աշխուրերի վարձատրությունը, հանրայնացված գույքի համար ստացված վարձատրությունը և այլն) յենթակա չեն հաշվառման:

§ 83. Վարձու աշխատանք չկիրառող կոոպերացված տնայնագործների և արհեստավորների յեկամուտները հաշվի յեն առնվում նույն ձևով, ինչպես և մյուս աշխատավորական տնտեսությունների յեկամուտները:

§ 84. Վոչ-գյուղատնտեսական յեկամուտ ունեցող բոլոր տնտեսությունները (նույն թվում և կոլտնտեսության անդամները) ցուցակագրվում են առանձին արձանագրություն-ցուցակում:

Այդ արձանագրություն-ցուցակը գյուղհարկհանձնաժողովը լրացնում է հետևյալ կարգով՝

ա) 1-ին սյունյակում ցույց է տրվում համարներն ըստ կարգի.
բ) 2-րդ սյունյակում տնտեսության ձևն ըստ գյուղացուցակի.
գ) 3-րդ սյունյակում տնտեսության տիրոջ ազգանուն, անունը և հայրանունը.

դ) 4-րդ սյունյակում գրվում է վոչ-գյուղատնտեսական զբաղմունքի մասնաձևի անվանումն և աշխատանքի վայրը (հյուան, դարբին, քրաղաց, կոոպերատիվի գործակառար և այլն):

յե) 5-րդ սյունյակում պետք է գրել ձեռնարկության մեջ աշխատողների թիվը (վարձու բանվորների և ընտանիքի անդամների թիվը):

6-րդում պետք է գրել ձեռնարկության մեջ, վորքան որոմարդ է աշխատել (քանի մարդ, քանի որ է աշխատել մեկ թվով):

7-րդում պետք է գրել ձեռնարկության մեջ աշխատած բոլոր օրերի թիվը.

8-րդում պետք է գրել ձեռնարկության կամ աշխատանքից ստացած ամբողջ յեկամտի գումարը, առանց ծախքերը հանելու:

9-րդում պետք է գրել ձեռնարկության ծախսերի անվանումները (վառելիք, բանվորների վարձ և այլն):

10-րդում պետք է գրել նույն ծախսերի գումարները.

11-րդում պետք է գրել ձեռնարկության յեկամտի գումարը՝ ծախքերից հետո (8-10):

12-րդում սյունյակը հաշվառման ժամանակ չի լրացվում և չի գրվում:

Ծանոթություն.—Սյունյակում պետք է ցույց տալ նաև այն բոլոր տեղեկությունները, վորոնք անհրաժեշտ են աշխատանքի յենթյթը պարզելու համար, այն է՝ արտադնաց, մշտական բնակության տեղը, վորքան հաճախ է արտադնացը լինում իրեն անը և այլն:


§ 85. Վոչ-գյուղատնտեսական աղբյուրի կորցնելն, հաշվառման ակաշըջանում, վորպես ընդհանուր կանոն հիմք չի կարող ծախել դրա յեկամուտները հաշվի չառնելու համար:

Ծանոթություն.—Այն դեպքերում, յերբ վոչ-գյուղատնտեսական յեկամտի աղբյուրի կորցնելը զգալի չափով թուլացրել է հարկատվի վճարունակությունը և այդ յեկամուտը նույն տարում հարկելով ավելի ևս կթուլացնի տնտեսությունը, գյուղում հարկհանձնաժողովն իրավունք ունի հարկատվի դիմումի համաձայն լրիվ կամ մասամբ աղատել այդպիսիները, նկատի ունենալով տնտեսության ունակությունը, կորցրած աղբյուրի չափը և այլն:

§ 86. Գյուղական հարկային հանձնաժողովները վոչ-գյուղատնտեսական զբաղմունքներից ստացած յեկամուտները վորոշելուց հետո՝ ստացված արձանագրություն-ցուցակը գյուղացուցակի և մասնավոր չուսյում բարձր գներով վաճառելից ստացած յեկամուտներ ունեցող տնտեսությունների ցուցակի հետ միասին ներկայացնում են շրջործկոմերին հաստատելու և հարկելու համար:

ՀՍԽՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՔԱՍԱԿԱՆ ԳՐԱԴՈՒՄՆԵՐԻ ՍԵԿՏՈՐ



336.2
2-94



27685